Աստուածածին սուրբ Կոյսն է.
Զոսկի ոգկոյզն որ տեսար՝
Իւր միածին որդին է.
Զխաչտ աղաւնին որ տեսար՝
Մբխիթարիչ հոգին է.
Պետրոս երազդ ի բարին.
Հրեշտակալին քոյ տեսիլդ»
Վ.Ա.Ն.

ՇԻՐԱԿԵՑԻ.—«Մարօ»։ Պատկերներ իրական կեանքից։ Ալեքսանդրապոլ, տպ. Սանոյեանցի, գինն է 50 կոպէկ։

Երբ վիպասանը ձեռն է առնում գրիչը, նա կամենում է կամ խորը թափանցել մարդու հոգու մէջ և երևան հանել հոգու բոլոր շարժումները. գլխաւորապէս մարդու ներքին աշխարհի հետ գործ ունի այն հեղինակը, որ պատկանում է վէպի հոգեբանական ուղղութեանը (Psychologique). Կամ երբեմն վիպասանին հետաքրքրում է բոլորովին ալ բան, նա գրում է բոլորովին ալ դիտաւորութեամբ։ Նա ցանկանում կեանքի մէջ իրականացած տեսնել որոշ գաղափարներ. նա այդ բանը անում է վէպի միջոցով. հոգեբանական վերլուծութիւնը ալ ևս առաջին տեղը չէ բռնում։ Սա է տենդենցիական վէպի առանձնայատկութիւնը. այս ուղղութեամբ էր գրում մեր Րաֆֆին, այս ուղղութեան է պատկանում և Բելլամին («Ապագայ դար»). Կայ և մի այլ ուղղութիւն—նատուրալիստականը (Zola). սրա նպատակն է տալ կեանքի նկարագիր, բայց նկարագիր, որ հիմնուած է կեանքի լուրջ ուսումնասիրութեան վերայ։ Սակայն որ ուղղութեան էլ կողմնակից լինի վիպասանը, եթէ կամենում է հետաքրքրական և օգտաւէտ լինել, նա պէտք է դէմ դնայ գեղարուեստի այն օրէնքներին, առանց որոնց չէ կարող իրականանալ գեղեցկի գաղափարը. այդ օրէնքները սորա կամ նորա քմահաճութիւնը չեն. նոքա բղխում են գեղարուեստի էութիւնից, նոքա վաւերացրած են հանճարների հրաշալի օրինակներով։ Եթէ վիպասանը իրար ետևից շարում է եղելութիւններ, խօսեցնում գործող անձանց և այդ բոլորը նա անում է այնպէս, որ ոչ դէպքերը, ոչ խօսակցութիւնները իրար հետ չեն հետևում, այն ժամանակ, ի հարկէ, երկասիրութիւնը մատնուած է անհետաքրքրութեան, և հեղինակը ինքն է իր ձեռքով առաջին մահաբեր հարուածը տալիս իր գրուածքին։

Այդպիսի մահաբեր հարուած է հասցնում իւր գրուածքին և «Մարօ»ն հեղինակը։ Այս պատկերը՝ ոչ մի տպաւորութիւն չէ թողնում ընթերցումից լետոյ. կարդաս չը կարդաս—մի հաշիւ է։ Ի՞նչ է նորա անհետաքրքրութեան պատճառը։ Պատճառը շատ հասարակ է. Երբ

հեղինակը այս պատկերը գրելու համար ձեռն է առել գրիչը, նա ինքը իւր համար որոշած չէ եղել թէ ինչն է հետաքրքրական ապատեղ, ինչ բանի վերայ հարկաւոր է աւելի ուշադրութիւն դարձնել և ինչ բան պէտք էր բոլորովին թողնել. ինչեր չէ պատմում հեղինակը այս փոքրիկ գրքոյկի մէջ (32 էջ). ապատեղ կայ նշանդրէք, հարսանիք, եղբայրա սպանութիւն, ինքնասպանութիւն, նոր հարսանիք...

Մեր ինչին է այս բոլորը, ինչ է ուզում ասել հեղինակը. Ապատեղ գործող անձինք շատ կան, — բայց ոչն է ուշադրութեան արժանի. ապատեղ դէպքեր շատ կան, — որի վերայ պէտք է կենդրոնանայ մեր հետաքրքրութիւնը. Ո՛չ մի դէպք, ո՛չ մի անձնաւորութիւն, ո՛չ մի խօսակցութիւն հետաքրքրական չէ ապատեղ. Իդէա չկայ գրուածքի մէջ. չեմ ասում խրատ, այլ իդէա, առանց որի ես չեմ կարողանում երևակայել մի գրուածք, որ գեղարուեստական արժանաւորութիւն ունենայ. Վերցնենք մի անմեղ բան. Ենթադրենք, որ բանաստեղծը կամենում է նկարագրել Մասիսը. նա աշխատում է արտայայտել այն տպաւորութիւնը, որ անում է նորա վերայ այս լեռը իւր վեհութեամբ և ուրիշ յատկութիւններով. ահա նորա բանաստեղծութեան իդէան. Բայց եթէ նա Մասիսը նկարագրելիս չանկարծ վիշէր թէ ինչպէս երկու կատու մռնգում էին այդ ժամանակ, այն բանը, ի հարկէ, ծիծաղալի կը լինէր. մթթէ հարկաւոր էր և կատուների մռնդոցը՝ Մասիսը աւելի լաւ երևակայելու համար. Աւելս այն է, որ ամենաանմեղ գրուածքի մէջ էլ պէտք է արտայայտուի այն օրէնքը, որով պայմանաւորում է գեղեցկի հասկացողութիւնը. Առանց այս օրէնքի՝ գրուածքը կը լինի զանազան եղելութիւնների և խօսքերի տաղտկալի կուտակումն.

«Մարօվի» հեղինակը նախ սկսում է պատմել թէ ինչպէս մի գիւղում ապրում էին երկու բարի մարդիկ. Ընթերցողը սպասում է, թէ հայ գիւղացու նահապետական կեանքի մի իդիլիա պէտք է կարդայ, բայց պատկերի կիսում ծնողները մեռնում են, և հրապարակ են գալիս որդիքը. Առաջ մեռնում է այդ որդոց մայրը, յետոյ հայրը՝ զաւակներին երկար խրատելուց յետո. Մարդ, ի հարկէ, չէ ափսոսում, որ նոքա մեռան. Մարդիկ են էլի, ապրեցին և մեռան. Գոգոլը իւր „Старосвѣтскіе помѣщики“ իդիլիայի մէջ նոյնպէս նկարագրում է երկու ծերունիներ, որոնք ապրում են նահապետական խաղաղ և պարզ կեանքով, և եթէ նոքա մեռնում են, ընթերցողը նոցա խրդճում է, որովհետև նորան այնպէս է թւում, թէ նա թաղից շատ ծանօթ և բարի մարդկանց.

«Մարօվի» մէջ ծերերին թաղելուց յետոյ ընթերցողը շուտով համոզում է, որ հեղինակի խօսքը նոցա մասին չէր. բայց այն ժամանակ էլ ինչ միտք ունէր գրքոյկի կէսը նուիրել նոցա. Յետոյ սկսում է մի նոր ֆաբուլա. Հայրերը մեռան, նոցա տեղը բռնեցին որդիքը. Երկու եղբայրներից մէկը բարի է և գեղեցիկ, իսկ միւսը չար և նախան-

ձոտ, ինչպէս Կալէնը։ Վերջինս արդէն պատկած է, իսկ միւսը դեռ նոր է ուզում պատկել։ Զար եղբայրը նախանձում է, որ եղբայրը պատկում է գեղեցիկ Մարօի հետ, որի վերայ նա վաղուց սիրահարած է։ Հարսանիքի գիշեր է։ Զար և նախանձոտ եղբայրը սպանում է իւր բարի և գեղեցիկ եղբօրը, խելագարւում և փախչում։ Յետոյ նորան կամենում են տանել Սիբիր, իսկ նա ճանապարհին իրան գցում է գետը և խեղդւում։ Անցնում է երկու տարի, Մարօն պատկում է «Կ. գիւղի քնակիչ Մ. Ց.-ի հետ և 1891 թ. Յուլիսի 17-ին կատարւեաւ Մարօի հարսանիքը»։ Այդ նոր ամուսինը նոյնպէս բարի էր և գեղեցիկ։

Պատկերը վերջանում է։ Պատկերը սկսւում է այնպէս և վերջանում այնպէս, որ նորան մարդ կարող է ձգձգել, որքան սիրտը կը տայ։ կարելի էր, օրինակ, սկսել եղբայրների պապերից, կարելի էր նոյնպէս, Մարօի երկրորդ անգամ պատկելուց յետոյ, սկսել մանրամասն կերպով նկարագրել շատ բաներ նորա յետագայ կեանքից։ Մարօն երկրորդ անգամ ամուսնացաւ, և հեղինակը կարծում է, թէ ինչ որ ուզում էր ասել, ասաց։

Ես հաւատացած եմ, որ շատ բաներ, որ նկարագրւած են պատկերի մէջ, կարող են եղած լինել։ Նոյն իսկ հեղինակը կարող էր նոցա ականատես եղած լինել, որ ոչ բոլորը, ինչ մենք տեսնում և լսում ենք, կարող է վէպերի և պատկերի նիւթ դառնալ։ դէպքի կամ անձնաւորութեան նկարագրութիւնը պէտք է ներկայացնէ հետաքրքրութիւն կամ հոգեբանական կամ գաղափարի տեսակէտից։ առ նւազը գրւածքը պէտք է լինի գեղարւեստական ամբողջութիւն։

Եթէ գեղարւեստի այս տարբերական օրէնքներին հաւատարիմ մնար հեղինակը, նա ալ ես կարեւոր չէր համարիլ գրքոյկի երեսին նշանակել

«Պատկեր իրական կեանքից»։

Մեզ հարկաւոր չեն այսպիսի ոչ «իրական և ոչ եղերական վէպեր և պատկերներ», մեզ հարկաւոր են միմիայն գեղեցիկ վէպեր և պատկերներ, որոնց նիւթը լինի իրականութիւնը։—

Այս պատկերի վերջին տողերը կարդալուց յետոյ, ընթերցողի աչքը կ'ընկնէ անպատճառ հետեւեալ տողերի վերայ։—

«Պատրաստ են տպագրութեան համար՝

1) Ուղեորութիւն (և այլն)։
2) Մշակ, վէպիկ թիւրքահայոց կեանքից։
3) Աշոտ երկաթ, պատմ. վէպ։
4) Վարդ-Անուշ, պատկեր։
5) Մշոյ Ս. Կարապետի վանքը։
6) Կարին քաղաք, նկարագրութիւն։
7) Երկու եղբայր, պատկեր իրական կեանքից։
8) Ոսկի ժամացոյց, պատկեր»։

Ինչո՞ւ... սա էլ հետաքրքրական է «իրական» պատկերների նման։ Թող իմանայ ընթերցողը, որ ծնւում է մի հայ բեղմնաւոր հեղինակ։

Լ. Մ.